Թափոնների տեսակավորումն ըստ ծագման

Դասապլան

Ներածություն

Ըստ ծագման՝ թափոնների տեսակավորումը կարևոր նշանակություն ունի վերամշակման և քայքայման համար: Չտեսակավորված խառը թափոնների աղբավայրեր տեղափոխումը բացասաբար է ազդում շրջակա միջավայրի վրա: Թափոնների տեսակավորման գործընթացը նվազեցնում է աղբավայրեր հասնող վերամշակելի թափոնների քանակը՝ դրանով իսկ ավելի քիչ տարածք գրավելով: Օդի և ջրի աղտոտվածությունը կարող է զգալիորեն կրճատվել, երբ վտանգավոր թափոններն առանձնացվեն և առանձին մշակվեն: Կարևոր է, որ թափոնները լցվեն առանձին տեսակավորման ամաններում, որպեսզի հնարավոր լինի դրանց հետ պատշաճ կերպով վարվել:

Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- ուսումնասիրել թափոնների տեսակավորման կարևորությունը,
- դասակարգել և ճիշտ տեսակավորել թափոնները:

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը.
ուսումնական պլանների փոխկապակցում, կայունության աուդիտի իրականացում, իրազեկում և ներգրավում:
Ուսումնական պլանների փոխկապակցում.
բնապահպանություն:

Eco-Schools

6-8
Տարեկան

Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 20 րոպե տեսակավորման համար, 10 րոպե տեսակավորման գործունեության և 10 րոպե քննարկման համար:
- **Գնահատում.** 20 րոպե

11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES

14 LIFE BELOW WATER

15 LIFE ON LAND

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Երկու տեսակավորման աման (մեկ կապույտ՝ չոր թափոնների համար, մեկ կանաչ՝ թաց թափոնների համար)
- գրիչներ
- ռեսուրս 1 և 2. Թերթիկներ. մեկ թերթիկ յուրաքանչյուր աշակետի համար

Գործողություններ

Նախնական առաջադրանք ուսուցչի/ դասընթացավարի համար

Թղթի վրա գրանցեք տարբեր քայքայվող և չքայքայվող թափոնները, ինչպիսիք են՝ բանջարեղենի կեղև, մրգի միջուկ, ծաղիկներ, այգու տերևներ, պլաստիկ, թուղթ, ապակի, քառակուսի տուփեր, փայլաթիթեղ, մատիտի կտորներ, ժապավեն, գամասեղներ, մետաղական սեղմակներ, փաթեթ, շոկոլադի թղթեր, պոլիէթիլենային տոպրակ, ջրի պլաստիկ շիշ, զովացուցիչ ըմպելիքի պլաստիկ շիշ և այլն: Անհրաժեշտության դեպքում ավելացրեք ևս մի քանի անուն՝ համոզվելու համար, որ յուրաքանչյուր աշակերտ ունի մեկ թերթիկ: Որոշ անուններ կարող են կրկնվել: (Ռեսուրս 1)

Դասարանային աշխատանք 1

- Դասարանին ներկայացրեք թեման, ցուցադրեք տվեք նրանց տեսակավորման անները և բացատրեք, թե որ տեսակի թափոնը որ ամանի մեջ կարելի է գցել:
- Թեման ներկայացնելուց հետո յուրաքանչյուր աշակերտի հանձնարարեք տուփից վերցնել մեկական թերթիկ:
- Այնուհետև անհրաժեշտ է, որպեսզի աշակերտներն իրենց թղթերը դնեն համապատասխան ամանների մեջ (կապույտ՝ չոր թափոնների համար և կանաչ՝ թաց թափոնների համար):
- Աշակերտները պետք է գտնեն թղթի վրա նշված յուրաքանչյուր ապրանքի համար ճիշտ ամանները և համապատասխանաբար դրանք դնեն ամանում:

Եզրակացություն

Գործողությունն ավարտելուց հետո ստուգեք ամանների մեջ նետված թղթերը և սխալի դեպքում աշակերտներին տեղեկացրեք, թե յուրաքանչյուրն ինչ բաղադրություն ունի, և որ ամանը պետք է նետվեր:

Գնահատում

Թերթիկի կենտրոնում պատկերված է 2 աման:

- Արտաքին շրջանակը բաղկացած է ամենօրյա օգտագործման տարբեր իրերից:
- Հանձնարարեք աշակերտներին յուրաքանչյուր կետից գիծ քաշել դեպի համապատասխան աման:
- Աշակերտները կարող են օգտագործել տարբեր գույնի մատիտներ՝ թափոններն ըստ ամանների ճիշտ առանձնացնելու համար:

Դասընթաց 1

Տարանջատման թերթիկ

Յուրաքանչյուր պատկերից գիծ քաշեք դեպի աման:

Գնահատում

Աշակերտները պետք է հասկանան տեսակավորման հայեցակարգը և այն հիմնական կատեգորիաները, որոնցում պետք է տեսակավորեն տարբեր տեսակի թափոններ:

Դասուրս 2

Թերթիկ

Տերևներ

Շոկոլադի թուղթ



Մատիտի կտոր



Զովացուցիչ ըմպելիքի շիշ

Պլաստիկ տոպրակ



Սեղմակ

Մրգի մնացորդ

Կաթի շիշ



Փայլաթիթեղ